2P77

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«25» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 044 - 25

Նախաձեռնող՝ *«Լի-Անի դայմոնդս» ՍՊԸ*
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 15/10

Գործունեությունը՝ *Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 044 - 25

«25» փետրվարի **2025թ.**

«Լի-Անի դայմոնդս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Լի-Անի դայմոնդս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Աբովյան 4-րդ միկրոշրջան 15/10

Ներածական մաս. Բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 15/10 հասցեում, նախատեսվող գործունեության տարածքին անմիջապես կից գոյություն ունի գործող մանկապարտեզ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման N28032024-07-0054 վկայականը, Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված 2024թ-ի սեպտեմբերի 13-ի ՆՆԹ-0381-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, հողամասի տարածքը զբաղեցնում է 0.39559 հա մակերես:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականության:

Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 3955.9 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 1455.77 քմ / 36.8 %,
- կանաչապատման մակերեսը՝ 2374.15 քմ / 60,01 %,
- անջրանցիկ տարածքի մակերես՝ 125.98 քմ / 3.19 %,
- ավտոկայանատեղիների քանակը ՝ 246,
- բնակարանների քանակը՝ 307,
- շին.մակերեսը՝ 35331 քմ:

Նախագծով առաջարկվում է կառուցել բազմբնակարան բնակելի համալիր: Այն բաղկացած է 3 կցորդ մասնաշենքերից (Ա, Բ և Գ), բաղկացած է երկու նկուղային և 16 վերգետնյա հարկերով: Ըստ հատակագծային լուծման համալիրն ունի ուղանկյուն տեսք: Բոլոր մասնաշենքերում տեղադրված են երկուական վերելակներ: Նկուղային հարկերը (-7.20 և -3.90 նիշերում) ամբողջովին զբաղեցնում է տեխնիկական սենքերը ինչպես նաև ավտոկայանատեղին , որի մուտքերը կազմակերպված է հողամասի ցածր նիշերից՝ Ա և Գ մասնաշենքի եզրային հատվածներից: 0.00 նիշում գտնվող առաջին հարկում ամբողջությամբ տեղակայված են հասարակական տարածքներ, որոնց մուտքերը կազմակերպված են հողամասի հյուսիսային՝ ներբակային հատվածից: Առաջին հարկի ետնամասում են գտնվում բնակելի շենքի հիմնական մուտքերը և էվակուացիոն ելքերը ավտոկայանատեղիից: Երկրորդից (+3.90 նիշ) մինչև 16-րդ (+50.10 նիշ) հարկերում տեղակայված են բնակարաններ 1,2,3 և 4 սենյականոց բնակարաններ տրանսֆորմացվելու հնարավորությամբ: Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի տարածքում առկա է քանդման ենթակա մանկապարտեզ՝ 1390,47 քմ, անցակետ՝ 30 քմ: Շենքի քանդումը կիրականացվի տեխնիկական միջոցների կիրառմաբ (բացառելով պայթեցման աշխատանքները):

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ ենթակայանից կիրականացվի 300 մ ստորգետնյա մալուխագիծ, որը կմիացվի շենքի մուտքում տեղադրվող 0.4 կվ ենթակայանին: Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Մաքրավանի ջրաղբյուրից, իսկ ջրահեռացումը միանալով Հատիսի փողոցով անցնող D=500 մմ կոյուղատարին: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով լիցենզավորված կազմակերպության կողմից, կամ շինարարության թույլտվության ստացումից հետո փաստաթղթերի փաթեթը կներկայացվի լիազոր մարմին ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1420 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/(այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 15500 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- քանդման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով 4 հատ տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 1600 քմ մակերեսով տարածքի վրա: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է՝ օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում, օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում:

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2120000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ: ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումները: ՇՄԱԳ հաշվետվությունը փորձաքննական գործընթացում հանված բազմաթիվ դիտողություններով և առաջարկություններով վերադարձվել է նախաձեռնողին լրամշակման, որոնցում եղել են նաև դիտարկում՝ հարակից հողամասում առկա հասարակական օբյեկտի /մոտ 15 մ հեռավորության վրա գտնվող գործող մանկապարտեզ/ վրա բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման, հողային և շինարարական աշխատանքների հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, որոնք կարող են ուղեկցվել փոշեգոյացմամբ, աղմուկի և թրթռման առաջացմամբ և այլ ազդեցություններով և ազդել մանկապարտեզի բնականոն գործունեության և սանիտարական պայմանների ապահովման վրա: Ընկերության կողմից լրամշակված հաշվետվությամբ չի ներկայացվել բավարար տեղեկատվություն և հիմնավորումներ նշված դիտարկման և փորձաքննության

գործընթացում բարձրացված հետևյալ հարցերի վերաբերյալ, որոնք ներկայացված են ստորև՝ փորձաքննական հիմնավորումներում:

Փորձաքննական հիմնավորումներ

1. Հաշվետվությունում չի ներկայացվել հավաստի տեղեկատվություն նախատեսվող գործունեության տարածքում հողաբուսական շերտի առկայության, դրա ծավալների, հանման և պահպանման վերաբերյալ (հայցվող տարածքում կամ անմիջապես հարող տարածքներում ծառերի առկայություն և պահպանման միջոցառումներ), սակայն քարտեզագրական նյութերով փաստվում է վերջինիս առկայությունը:
2. Հաշվետվությունում չի հիմնավորվել և չի ներկայացվել տեղեկատվություն՝ քանդման աշխատանքների եղանակի և օգտագործվող տեխնիկական միջոցների, ինչպես նաև քանդման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հողային ծածկույթ և սոցիալական միջավայր/ վրա հնարավոր բացասական ազդեցությունների և դրանով պայմանավորված բնապահպանական միջոցառումներ վերաբերյալ՝ հաշվի չառնելով հարակից տարածքում գործող մանկապարտեզը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝ «Լի-Անի դայմոնդս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան